Բաժանորդագին ամեն տեղի համար տարեկան Ֆր· 10· —Վեցամսեայ Ֆր· 5· —Իւրաքանչիւր Թիւը կ՚արժէ Ղրշ· 1· —Փոստի ծախք Խմբագրութեան կը վերաբերի· —Ծանուցմանց համար մասնաւոր սակարկութիւն·
—Հասցէ՝ —Տուփ թիւ 275, յԵգիպտական բղրատուն, յԱղեքսանդրիա [Եգիպտոս]·

Adresse. — Boite N. 275 (Poste Egyptienne) Alexandrie (Egypte).

Ա· ՏԱՐԻ | (Հ· Տ·) 18 ՅՈՒՆՎԱՐ 1889 | ՓՈՐԵՁԵՑԱՐԹ | 1889 ՅՈՒՆՎԱՐ 30 (Ն· Տ·) | Թիւ 3

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, 18 ՅՈՒՆՎԱՐ

ՊԱՏՄԱՆ ԵՒ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի հաստատութենէ տիեզերաց մինչեւ ցայսօր առանց քննելու իսկ կը տեսնեմք ամէն բան որ ի շարժումի եւ ի կեանս է. երկինք՝ կ՚ամպոսի, կ՚անձրեւէ, կը դադրի, կը պայծառանայ. ծով՝ կ՚ալեկոծի, կը հանդարտի. արեւն ու լուսին, մոլորակք եւ աստեղք՝ օրեր կը սահմանեն, ամիսներ կը ձեւացնեն տարիներ եւ դարեր կը բոլորեն. երկիր՝ բոյսեր, ծառեր կ՚արդիւնաւորէ, կ՚արտադրէ. շնչաւորք՝ կը ծնին, կը տեւեն եւ կը վերջանան. ի նոյն վիճակի կան եւ անշունչ ամէն իրեր որ ի տիեզերս. եւ մեք այս ամենուն համար հարեւանցի կերպով միայն Ս. Գրքին առաջին էջերը կարդալով կ՚անցնիմք «Ասաց եղեւն, հրամայեաց եւ հաստատեցաւ»։

Եւ ով կը տարակուսի. ճիշդ է մեր հաւատքը. միայն սա տարբերութիւնը կայ։ Մենք կը հաւատամք առանց գիտնալու. բայց նոքա որ ամէն ժամանակ աշխարհի ստեղծագործութեան խնդիրը իրենց քննութեանը առարկայ ընելու մանագիտութիւնն ունեցած են, եւ դեռ եւս գէթ առօրեայ ընթերցասիրութեամբ նոքա կ՚զբաղին հետաքրքիր, իրաւունք ստացած են մեզ համոզելու համար թէ՝ Նախախնամութեան այդ ԱՍԵԼԻՆ եւ ՀՐԱՄԱՅԵԼԻՆ մէջը կատարեալ պայման եւ գիտակցութիւն կայ. եւ անշուշտ գիտեն թէ ինչ տարերօք պայմանաւորեալ է կեանքն. եւ թէ առանց էական պայմանի ոչինչ կայ յաշխարհի. ո՛չ կեանք եւ ո՛չ հաստատութիւն։ Զի ոչ թէ ամենայն ինչ յաշխարհի ծնան զպայմանս. այլ պայմանքն էին եւ են որ սկիզբն տուին եւ տան ամենայն կենաց։

Ի՞նչ է բուսնելու եւ աճելու պայմանը. —Ջերմութիւն եւ խոնաւութիւն։

Ի՞նչ է փոթորկաց, մրրկաց եւ ալեկոծութեանց պայմանը. — Հողմ։

Ի՞նչ է ապրելու պայմանը. — Օդ։

Ի՞նչ է վերջանալու պայմանը. —Մաշողութիւն։

Եւ ինչպէս որ ի գործնականին, այնպէս խնա՛ եւ ի տեսականին։

Ի՞նչ է գիտնալու պայմանը. —Ուսանիլ։

Ի՞նչ է զարգանալու եւ յառաջդիմելու պայմանը. —Գործել եւ աշխատիլ։

Ահա այսպէս աշխարհիս ամէն տեսակ կենաց եւ գործոց մէջ իւրաքանչիւրն է իր պայմանաւ։

Վերցո՛ւ խոնաւութիւն եւ ջերմութիւնն. —Բուսնիլ եւ աճիլ չ՚կայ։

Դադրեցո՛ հողմը. — Փոթորիկ կամ ալեկոծութիւն չ՚կայ։

Հեռացո՛ օդը. —Սպրիլ չ՚կայ։

Արգիլէ մաշողութիւնը.—Վերջանալ չ՚կայ։

Կարճէ՛ շոգին. —Շարժիլ չ՚կայ։

Մի՛ ուսանիր. —Գիտնալ չ՚կայ։

Մի՛ գործեր եւ աշխատիր. —Զարգանալ եւ յառաջդիմիլ չ՚կայ։

Վերջապէս զանց ըրէ ամէն պայման ամէնի համար. —Կեանք չ՚կայ։

Այսպէս հաստատեցաւ տիեզերքը իր ամէն մանրամասնութեամբն ի նախախնամութենէ եւ այսպէս պիտի շարունակէ ցվերջ։

Բայց եւ այնպէս չ՚պէտք է մոռանալ նաեւ այն զօրութիւնն որ միշտ յարակից կընթանայ պայմանին, եւ առանց որոյ պայմանն ալ կը տկարանայ եւ կենտաւ լինելէ կը դադրի. այն է՝ Գիտակցութիւն։

Առանց գիտակցութեան՝ պայմանաւորէ՝ ինարուցանդ, չ՚պիտի օգտուիս խոնաւութենէ եւ ջերմութենէ։

Առանց գիտակցութեան՝ անժամանակ նաւեր ուղղէ՝. պիտի նաւարեկիս ի խորասուզիս։

Առանց գիտակցութեան պայմանին՝ շարժէ՝ անձդ կամ մեքենան, պիտի բաղխիս եւ խորտակիս։

Այն օրինակ առանց գիտակցութեան պայմանին՝ գործէ՝ ու աշխատէ՝, չ՚պիտի կարես զարգանալ եւ յառաջդիմել, այլ պիտի յոգնիս եւ վերջի ի վերջոյ պիտի յուսահատիս. զի շատ իրաւամբ դրած է խնամատունին մեկը թէ՝ «Աշխատասիրութիւնը նաւ մ՚է. ասոր ղեկը գիտակցութիւն եւ խոհեմութիւնն պիտի ըլլայ. դրամը՝ առագաստները՝ լեցընող յաջող հովեր. ուսմունքն ու կրթութիւնն՝ իրեն բեւեռային աստղն ու կողմնացոյցը. յարատեւութիւնն ուղղորդը՝ իրեն խարիսխը. ամէնէն աւելի խնամատուն առաջնորդութիւն մեկ նաւապետի, ու միաբանութիւն եւ հնազանդութիւն գործունեայ նաւավարներու. այսպէս որ ըլլայ, փոթորիկներէն չվախ մի ունենար»։

Ուստի մանաւորելով խօսքերնիս դառնանք մեր ազգային կենաց վրայ ակնարկ նետելու եւ խնամատսիրելու համար թէ՝ այն ուղղութիւնն որ տրուած եմք մեր ազգային կենաց պատկանող ամէն կարգի գործոց եւ ընդհանրոյց, առ ի զարգացումն եւ յառաջդիմութիւն, դոքա արդեօք պայմանաւորեա՞լեն կատարեալ գիտակցութեամբ թէ ի զուր են մեր հանապազօրեայ ճըգումնք եւ վաստակք։

Եթէ են՝ ինչի համար օգտուած չեմք անոնցմէ. եթէ չեն՝ ինչի համար չ՚ձեռնարկեմք եւ չ՚աշխատիմք ունենալու. իսկ եթէ են եւ այդ էից մէջ պակասներ կան եւ սխալներ են սպրդած, ինչի համար չ՚կատարելագործեմք եւ չուղղեմք մեր թերութիւնքն։

Զ՚գիտնալն ամօ՛ի չէ. բայց չ՚ուսանելն է այպանելի։

Զ՚ունենալն մեղք չէ. բայց ունենալու չաշխատիլն է դատապարտելի։

Տգիտութեամբ սխալ քայլ առնելն խելացիութիւն չէ. բայց խոտոր ճամբէն յետ չ՚դառնալն խենդութիւն է։

Աշխարհ ամէն այսպէ՛ս վճռած է եւ այսպէս կ՚հաւատայ։

Իսկ նոքա որ ամենայնիւ բաղդին կամ դիպուածին կը հաւատան եւ անանցեմք շատ գործեր ու յաջողութիւններ յուսալով անհոգ կ՚մնան, նոքա ընդհանրապէս կը սխալին. զի արդարեւ երբեմն դիպուածն մ՚եծ գործեր կարտաբերէ բայց ոչ շատ անգամ՝ եւ այդ բաղդն ալ ամենուն տրուած չէ։

Ինչի համար Քրիստոսի առակած հարսնեւորները դուրսը մնացին, վասն զի ներս մտնելու պայմանին անգիտացան կամ՝ միւսնոյն բանն է, անհոգ կեցան։

Ինչի համար քանքարաշատագոյց ծառայն դուրս ելնելու դատապարտուեցաւ, վասնզի իրեն տրուած մնասին յարդը չ՚գիտցաւ եւ չարդիւնաւորեց, այսինքն՝ իր պաշտօնին անգիտանալի աւելի՝ն օգուտ քաղելու անփոյթ դիտնելեցաւ։

Վերջապէս եթէ կամիս աշխարհի հարցո՛ւ, Ինչո՞ւ չ՚յաջողեցար. Պատասխանը միշտ նոյնը պիտի դտնաս. հարիւրին իննսուն եւ ինն պայմանին անգիտացաւ եւ միայն մին է գիպուածի արդիւնք

Օն՝ ուրեմն տեսնեմք.

Այդարեւ այն ամէն յատկութիւնք՝ որք ազգի դոյութեան եւ կազմակերպութեան էական պայմաններն են, ունիմք եւ մեք։

1. Քրիստոնէական Ս.Կրօնք, որոյ կեդրոնավայրն է Ս. Եկեղեցին։

Մեր նախնիք այդ Սուրբ Վայրը ուրիշ ամէն ազգերէ աւելի պայծառացուցած եւ ճոխացուցած են կատարեալ հարստութեամբ նիւթական զարդուց, Աստուածային հաշտեցիր աղօթիւք, պերճիմաստ, անհամեմատ՝ եւ հեշտալուր ձայնիւք շարականաց եւ հոգեւոր երգոք. որք՝ մեր հոգին պիտի աղնուացնեն, զմեզ մեր ցաւոց մէջ պիտի մխիթարեն եւ առաքինացնեն, մեր խիղճն եւ բարոյականը պիտի մաքրեն. էր ուրեմն հայ ազգը օրըստօրէ դժբաղդաբար իւր դիրքին մէջ օտարներէ աւելի տկարանալու թեթեւնալու եւ իյնալու վիճակին հասած է։

Վասնզի այդ եկեղեցւոյ պաշտօնեայն որ կոչուած է վերոյիշեալ բարեմասնութիւններն ժողովրդեան աղդելու պաշտօնին, նա է ընդհանրապէս որ զուրկ է այդ պայմանաց գիտակցութենէն։

Վասնզի՝ սոփոսուած եմք ցաւօք սրտի խոստովանելու թէ իմեղ եկեղեցական պաշտօնէութիւնը մեծաւ մասամբ անկարողներու համար փառք եւ դրամ շահելու միջոց կամ արհեստ դարձած է։

(Շարունակելի)

ԲԱՂՈՒՍԾ ՇԱԲԱԹՍԿԱՆ ԼՐՈՅ

Ինչպէս արդէն ծանուցուած էր, անցեալ երկուշաբթի գիշեր տեղւոյս թատերասիրաց անձնուէր խումբը իր երկրորդ բարեգործական երեկոյթը ի հանդէս ածեց «Սիմոն Տաճարպետ» ազնուն թատերախաղով և 2,000 ֆրանգի չափ ընդհանուր հասոյթ մը գոյացուց։

Առաջին երեկոյթն տեղի ունեցեր էր ընդ հովանաւորութեամբ Նորին Վսեմութեան Պօղոս Փաշա Նուպարեանի. իսկ այն երկրորդ երեկոյթն տեղի ունեցաւ ընդ պաշտպանութեամբ Նորին Վսեմութեան Կարապետ Պէյի Բէյիզեանի։

Ահա երկու ազնուասիրտ անձնաւորութիւնք որք շատ պարագաներու մէջ չեն մտնար այսպիսի բարեգործական ձեռնարկութեանց նպաստելու համար աչխատիլ, նամանաւանդ երբ չարաչար անձինք պակաս չեն ի մեզ, որոնք պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու նպատակաւ ամէն աղմուկներ ընկերութիւններն առանց խղճի խայթի կը բամբասեն և յաչս կառավարութեան կասկածելի ցուցանելու չեն ամաչեր։

Այսպիսի պարագայի մէջ ահաւասիկ պատկառելի անձնաւորութիւնք այն արատը սրբելու նպատակաւ, նախ մանրամասնին քննութենէ յետոյ իրենց պաշտօնական և բարձր ներկայութեամբ բէն ցոյց առած և հաստատած են այդ տեսակ զրպարտութեանց անհիմն և անտեղի լինելը։

Այս առթիւ պարտ անձին կը համարիմք նաեւ ի գիտաց թատերասիրաց անձնուէր խմբին մեր խորին շնորհակալութիւնն յայտնել քաղաքիս երեւելիներէն առ Աշնուասիրտ Պ. Ն. Հ. որ ի դիտաց Վսեմ. Կարապետ Պէյի Բէյիզեան և ի նպաստ այն բարեգործական երեկոյթին չափազանց աշխատեցաւ դրեթէ համայն Ա. և Բ. կարգի օթեակները և 50 էն աւելի թիկնաթոռներ ցրուելով և դրամներն հաւաքելով։

Իսկ գալով անձնուիրաց խմբին, սոքա ևս առիթ չփախուցին կարելի եղածն իգործ դնելու, որպէսզի հանդիսականք գոհ լինին, և իրաւամբ բոլոր նեղեալ գանուող ամէն ազգի հանդիսականք մերթ լալով և մերթ խնդալով ամենայն շնորհակալութեամբ և գոհ սրտով մեկնեցան թատերասրահէն։

Իսկ Տիկին Սիրանոյշի մասին նորէն կրկնելու բան մը չունինք, զի ինքն արդէն հանրածանօթ է, արհեստին մէջ սէր ու անուշ բուրելով։

—Յարիզէն առնուած հեռագիր մը կը յայտնէ թէ՝ Գաղիոյ և Անգղիոյ մէջ համաձայնութիւն մը գոյացած է Եգիպտոսի Գառատանայ խնդրոյն վերաբերեալ։

—Շոգեկառաց գլխաւոր ընկերութեանց ներկայացուցիչներէ բաղկացեալ Գօնկրէ մը տեղի պիտի ունենայ ի Բարիզ, յառաջիկայ սեպտեմբերի 15էն մինչեւ ցվերջ նոյն ամսոյն։

Այս առթիւ կազմեալ միջազգային ժողովն բազմութիւն հրաւիրագրեր ուղած է ամէն երկիր։

Բնակութեան Եգիպտական շոգեկառաց վարչութիւնն իւր ներկայացուցիչներն պիտի ունենայ այս Գօնկրէի մէջ։

Գասթոն Լեմիքսիէն կ'ըսէ թէ այդ ներներկայացուցիչք պիտի լինին Մ. Մ. Թիմբման և Խակենոյր պէյ Ֆէհմի.

— Հանրական Գործոց վարչութիւնն մասնաւոր ժողով մը կազմած է ի Գահիրէ Մանսուր փաշայի ապարանքն նորոգելու համար, ուր պիտի հաստատուին Գահիրէի տեղական դատարանք և Կառավարութեան գրասենեակներն։

—Քաղաքիս Բլաս-ալ-Գոնսի հրապարակին վրայ սավրիչ այրի Տիկին Մէյանի խանութն շարախի գիշեր գողեր մտնելով 6000 ֆրանքայ արժողութեամբ գոյք վերցուցած են։

Գողութիւնն շատ յանդուգն և հարստաբակեաց ի գործ դրուած է. գողերն ստակաւին ձեռբակալուած չեն։

—Տեղւոյս Գօլան-ալ-Բանվ փողոցին մէջ տեղացի արապի մը տանէն դարշահոտութիւն մը զգալի ըլլալով, բոլորին տեղեկութիւն տրուած է, որ տան դուռն կոտրելով ներս մտած և մարդու դիակ մը գտած է մի քանի օրէ ի վեր մեռցած։

Դիակն փոխադրուած է ի հիւանդանոց։ Մահն՝ բնական ըլլալ կ'կարծուի։

—Յունաց Ամեն. Տ. Սոփրոնիոս Ս. Պատրիարքն անցեալ հինգշաբթի ի Գահիրէ մեկնեցաւ։

—Ամսոյս 27 ին Բարիզէն տրուած հեռագիր մը կ'իմացնէ թէ Մ. Պուլանժէ

Երեւելիներն ընտրուած է 244 հազար ձայնիւ, մինչդեռ Մ. ժագ մնայն 162 հազար ձայն ունեցած է։

Մ. Ֆլոքէ՝ Երես իոխանական Դանլիզի նախագահն, իւր հրաժարականն մատուցած է Հանրապետութեան Նախագահին։

Հաւանական է որ Ե Եսփոխանական Դանլիզը կը նորակազմուի։

—Ջանզիպարցիք Անգղիական միսիոնէռ Մ. Պրուքն սպանած են ի Սատանի։

—Տամանհուրի բամբակէն շատ քիչ կը հասնի յ'Ալէքսանդրիա, որովհետեւ վերջին անձրեւներն ճամբաները աւրած են։

Գիներն են՝ -Ընտիր տեսակը 300-320. Մէջինն 220-260. Ստորինը 160-200։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՆԵՂՈՍԻ

Գահիրէ, 27 Դեկտմ. 1888։

. . . . ! Մրաղիր.

Հետեւեալ երկտողիս հաճեցէ՛ք Ձեր պատուական «Նեղոսի» մէջ անկիւն մը շնորհել։

Երբ 1866ին Զէյթունցի իշխաններէն ջրոս անձինք պատրիարքարանի տատամսուտ ու վարանկոտ ընթացքէ դէմ խռովեալ Հասունին դիմեցին։

Երբ ժեզուիթք աւելի օգուտ քաղելով իրենց բոլոր ջանքը ի գործ կը դնէին Զէյթուն մտնելու։

Երբ Պոլսի ասմանադրիչք՝ զբաղեալ էին իրարու գլուխ պատռելու, առանց մեկուն հոգը լինելու թէ՝ գայլը՝ ոչխարը կը տանի.

Երբ գունդագունդ Զէյթունցի գառնուկներ ժեզվիթութեան փարախը կը-վազէին.

Եւ երբ Նրբահայեաց Հասուն՝ գօսեպնդեալ Թընկըրներու եւ Մսըրլը Պօղոս պէյի առատաձեռնութեամբ կը շլացնէր Զէյթունցիներու աչքերն զոյգ զոյգ դրպրոցներով.

Ցայնժամ Մեծ. Պօղոս էֆ. Կարապետեան Արապկերցի. այս պատկեշտ եւ իսկական Ազգասէր գաւառայի Հայը՝ ձեռներէց ու նախանամ եղաւ փրկելու համար սիրեցեալ Զէյթունը սպառնացեալ վտանգէն.

Տարեկան 100 հատ անգդ. ոսկի նուիրելով վարժարան մը հաստատեց անդ. որն որ Լինգ տարի տեւողութեամբ մեծ արդիւնքներ ընծայեց։ Պօղոս էֆ. ունի նաեւ մեծագումար կտակ մը, որ պիտի գործադրուի ի Կիլիկէ իւր անուամբ վարժարան մը հաստատելով։

ՑԵՔԱՑԱՑ

ՄԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԹԱՑՔԱՀՈՀՈՒԹԻՒՆ

ՆՈՐՅՏԻ ՊՕՂՈՍԵԱՆԻ

Որդւոյ՝ Մեծ. ՊԵՏՐՈՍ Պէյի

Եւ Թոռան

ՄԵԾ. ՊՕՂՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՐԱՊԿԵՐՑԻՈՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԶԼԵԹՈՒՆԻ

ՅՕԵՆ

Մանկի՛կ բոցաբիբ,
Ժպիտ ու թուշիկ.
Ընծայիս գողտրիկ,
Հօրդ անուշիկ։
Զեռ վարդ զուարթուն,
Ու գլխուլ թռչուն.
Բոյր, գեղ, բերես տուն,
Մօրդ նուագուն։
Սիրէ քեզ հայրիկ,
Ու պաշտէ մայրիկ.
Եւ պապ, մամ՝, քեզ գիրկ,
Կ'աւանուն քնքուշիկ։
Մանկիկ դու բեղուն,
Ընծիւղ պարարտուն.
Յարմատն այն զեղուն,
Բուսնիս բարերուն։
Զայս տեսնէ քնար,
Թնդայ եւ իմ ըսր
Թինդ, բերկրանք հազար,
Նուիրէ քեզ յար։
Տաւրոս ու ձիրան,
Սարոս Կիլիկեան.
Մշտաճոս գոռ սան,
Զարմիդ բարեջան։
Եւ անդրէն Զէյթուն,
Երգէ օրն ի բուն.
Թէ կեցցէ՛ անհուն,
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏՈՒՆ։

Յ. ՁԵՐԲԵԱՆ

Ներուսալէմ 2 Յունվար 1889.

Ենձրեւներն այս տարի քաղաքիս մէջ՝ հակառակ անցեալ տարւոյ անձրեւաց նուազութեան և հետեւաբար երաշտութեան, Նոյեմբեր ամսոյն սկզբէն՝ ի վեր յորդառատ տեղացին։ Ձիւներն իրար մէկ, մէկ ու կէս մետր բարձրութեամբ գետնի վրայ տարածուեցան։ Աստուած անձրեւաց այս վաղ ժամանումն յուսալիր նշան է առատաստականք դոհ լինին, և իրաւամբ բոլոր նեղեալ գանուող ամէն ազգի հանդիսականք մերթ լալով և մերթ խնդալով ամենայն շնորհակալութեամբ և գոհ սրտով մեկնեցան թատերասրահէն։

Իսկ Տիկին Սիրանոյշի մասին նորէն կրկնելու բան մը չունինք, զի ինքն արդէն հանրածանօթ է, արհեստին մէջ սէր ու անուշ բուրելով։

—Յարիզէն առնուած հեռագիր մը կը յայտնէ թէ՝ Գաղիոյ և Անգղիոյ մէջ համաձայնութիւն մը գոյացած է Եգիպտոսի Գառատանայ խնդրոյն վերաբերեալ։

—Շոգեկառաց գլխաւոր ընկերութեանց ներկայացուցիչներէ բաղկացեալ Գօնկրէ մը տեղի պիտի ունենայ ի Բարիզ, յառաջիկայ սեպտեմբերի 15էն մինչեւ ցվերջ նոյն ամսոյն։

Այս առթիւ կազմեալ միջազգային ժողովն բազմութիւն հրաւիրագրեր ուղած է ամէն երկիր։

Բնակութեան Եգիպտական շոգեկառաց վարչութիւնն իւր ներկայացուցիչներն պիտի ունենայ այս Գօնկրէի մէջ։

Գասթոն Լեմիքսիէն կ'ըսէ թէ այդ ներներկայացուցիչք պիտի լինին Մ. Մ. Թիմբման և Խակենոյր պէյ Ֆէհմի.

— Հանրական Գործոց վարչութիւնն մասնաւոր ժողով մը կազմած է ի Գահիրէ Մանսուր փաշայի ապարանքն նորոգելու համար, ուր պիտի հաստատուին Գահիրէի տեղական դատարանք և Կառավարութեան գրասենեակներն։

—Քաղաքիս Բլաս-ալ-Գոնսի հրապարակին վրայ սավրիչ այրի Տիկին Մէյանի խանութն շարախի գիշեր գողեր մտնելով 6000 ֆրանքայ արժողութեամբ գոյք վերցուցած են։

Գողութիւնն շատ յանդուգն և հարստաբակեաց ի գործ դրուած է. գողերն ստակաւին ձեռբակալուած չեն։

—Տեղւոյս Գօլան-ալ-Բանվ փողոցին մէջ տեղացի արապի մը տանէն դարշահոտութիւն մը զգալի ըլլալով, բոլորին տեղեկութիւն տրուած է, որ տան դուռն կոտրելով ներս մտած և մարդու դիակ մը գտած է մի քանի օրէ ի վեր մեռցած։

Դիակն փոխադրուած է ի հիւանդանոց։ Մահն՝ բնական ըլլալ կ'կարծուի։

—Յունաց Ամեն. Տ. Սոփրոնիոս Ս. Պատրիարքն անցեալ հինգշաբթի ի Գահիրէ մեկնեցաւ։

—Ամսոյս 27 ին Բարիզէն տրուած հեռագիր մը կ'իմացնէ թէ Մ. Պուլանժէ

ԹԵՐԹՕՆ ՆԵՂՈՍԻ

)(3)(

ՀԱԶԱՐ ԵՒ ՄԷԿ ԵՐԱԶՆԵՐ

Գրեց ՇԱՀԷՆ

Բ.

ՊԱՆԴՈՒԽՏ ԽՕՍԵՑԵԱԼՆ

Տերեւները դլխուս վերեւ, մարդն ոտիս ներքեւ, բնութեան քաղցրիկ պարգեւներով զեղուն, կայի անդ մնաղրաղ, ուր՝ ուրեք՝ ուրեք սպիտակ մարմարիոններ բարձր ու ցած էին կանգնած. խորին լռութիւնը տիրապետել կ'ուզէր զոգցեա՝ ծխերուն ու սոխակներուն դայլայլիկներէն ճանճրացած, այք անդադար կ'շարունակէին ու կ'առաւելուին իրենց անուշիկ ճիչերն, զի մնա էր վերջապէս։

Ծառի մի բունին յենած, բազուկ երս լանջաց վերայ խաչաձեւած, կ'զգայի երակաց արագ արագ զարկն. ինձմէ կանգուն մի հեռուն՝ սեռ խաչի մի ոսկի փոքրիկ հոլակոյտ մի կար զալարեօք բոլորուած մերկ ու անզարդ, այր վերայ յառած էին խաչոր աչերս ու կ'երեւակայէին տեսնել հոն տարածուած էակ մի նուրբ ու փափկահասակ, այր աչերն նմանեցին երկնից կապոյտին, դիմաց գոյնն՝ աշնան դալուկ տերեւին, ծոցածոց մազերն՝ ոսկւոյ, բարձր ու վեհ ճակատ մի. փոքրիկ ականջներ մէկ մէկ կեղծ մարդ արտեօք զարդարուն, գեղեղարակ ոչարդ շրջապէսաս մի մարմնին զրկած, և ա՜հ . . . նայուածք մի . . . ակնարկ մի . . . ։

Սակայն կ'ուզեմ, է՜՛՛հ, կ'ուզեմ թափանցել դերեզմանին խորը . . . ։

Ինքզինքս մոցած, ուժաթափ, մտա դացի և ծնկերս դերեզմանին ոտքին կոթնցընելով, սկսայ երկար ժամանակ ի վեր պահուած արտասուքն հոսեցնել աչերէս, զրանք կ'թանային անդադար դերեզմանն։

«Ով Աստուած, ո՛վ Աստուած, դոշեցի, ո՛ւր ինձ հոգւոյս հասուն, ո՛ւր իմ երանութիւնս, ո՛ւր իմ կեանքն. վայրկեա՜ն մի միայն, ա՜հ, վայրկեա՜ն մի, ոչսպի կարող ըլլամ իմ բազմաժամանակեայ բացակայութեանս ու անդութ վարմանցս փոխարէն իւր ներումն ստանալ իւր անարատ շրթներէն, բայց՝ մի լոկ կեանք տուր հրեշտակիս, որուն աչացն առջեւ քաւեմ իմ սխրն . . . , վայրկեա՜ն մի միայն։

—Սակայն չ'ես լսեր, չ'ես պատասխաներ. լռութեամբդ կ'սոսկացնես զիս։—Եւ եթէ այդ կեանքը, ա՜ւա՜ղ, թշուառութեանց հաւաքածոյն ու մահու սահմանն ունի . . . թո՛ղ խորտակուի նա, ա՛ւ. և զայն . . . ։

Այլ եւս համբերելու անկարող, ահագին բեռան մի ներքեւ ընկճեալի նման, ծանր ծանր հապիւ կարող եղայ յատակն կանգնիլ. նայուածքս՝ հեռուն հորիզոնին վերայ պնդած, հուրի ի մը պէս, զոգցես մեքենարար ակամայ ձեռքս դէպի դրպանս տանելով՝ պարզ երկաթ մի հանեցի անտի, որ զիս պիտի միացնէր խօսեցելոյս հետ, փոխան Խաչին . . . . զաչերն մի։

Արեգին վերջին շողերն յետին բարեւ մի կ'տային, ծխերն ու սոխակներ խառն ի խառն կ'ճռուզէին տխուր ձայնիւ. ամէն ի միասին, լերան ստորոտն սկսած էր մթագնել, հորիզոնը կարմիր բոցերու մէջ կ'այրէր, զաչերն կ'փալիլայր՝ դերեզմանին ուռ հողին վերայ ճամանչներ նետելով, քամի չ'կար, ծառոց ճիւղերն անշարժ ու հանդարտ կ'մնային բնութեան այս մեղմ ներդաշնակութեան ի տես, դուցէ և հանդիսատես՝ դառն խորհրդոյս իրականացման . . . ։

Յետին հառաչանք մի, յետին աղջոյն մի ա՛յն վայրկեանն ո՛ր միասին ժպտեցանք տարիներ յառաջ իմ խօսեցելոյն հետ, խստութիւնք փոխանցելով, աղջոյն մի ա՛յն թռչնոց որոց քաղցրիկ երգերուն խառնեցինք մեր խորհրդաւոր Սէրը, աղջոյն մի ա՛յն բոյսերուն որոց գրկաց մէջ ժամերով հանգչեցանք. «ա՜հ, մնա՛յք բարեաւ . . . ։»

Կ'մնայր վայրկենական հայեացք մի նետել իմ շուրջն, տեսնելու համար եթէ հեռաքրքիր աչք մի կ'դիտէ՞ վատ արարքս . . . ա՜հ, վա՜տ, վա՜տ . . . , բայց այս մտածումն կ'յեղաշրջէ, կ'սարսեցնէ զիս, ա՜չ, վատ չե՛մ ես . . . ։

Դաշոյնն անկաւ ձեռնէս, կթոսեցայ և ես. հալած կապարի պէս տարածուեցայ դերեզմանին վերայ, ու վերատին բացուեցան արտասուաց աղբիւրներն յորդահոս, զորաւորապէս ընչաղալութիւն մի կ'զգայի, խօսելու անչարող, անկենդան, անզգա՛յ . . . ։

* * *

Քունս ընկճած էր զիս, արեան քրտանց մէջ կ'լողայի, երբ զարթեայ։

Արշալոյսն վարդի գոյներ կ'տարածէր աշխարհի վերայ, շուրջս հայեցայ, սենեկիս մէջ եմ . . . զարմանք. — երազ մ'էր այն։

Խորհրդաւո՛ր երազ մի սակայն, որ պատճառ եղաւ վերադարձնել զիս ի Հայրենիս իմ, կարճ միջոցի մի մէջ ամուս-

թեան, որոյ աւելի մեծ ապացոյցն է քաղաքին արևելեան կողմն Սելվանայ(*) ձորին մէջ պեղուած Ցովբայ-հոր, պիր-Եյուպ Երբեմն Աբբա-հոր կոչուած ջրհորոյն զարմանալի յորդումն։ Այս ջրհորն ընդհանրապէս Աստուածաշունչի մէջ յիշուած Ցոբայ արդարոյն կ'ընծայուի. ասկէց իբր 10–15 տարի յառաջագոյն հետաքրքիր Եւրոպացի մը մէջն իջնելով քննութիւններ ըրած և ինչ ինչ տեղեր պեղել տուած է։ Նորա խորութիւնն է աւելի քան 100 մեթր. ընդարձակութիւնն անկանոն, սակայն միջին հաշուով հատիւ 4–3 մեթր է. փորուած քարաժայռէ է և վրան հին չինքով հաստատուած կամար մը կայ որոյ մէկ կողմն ժողովրդեան ամբիոն դասն՝ գիւղացիք սրտակի զգացմամբ իւղաճրագներով կը զարդարեն շատ անգամ իբրու նուիրական տեղի։

Զմեռան միջոցին երբ անձրևներն մի քանի օր շարունակ առատութեամբ կը յորդեն, նոյն ջրհորայն ջրերն կը բարձրանան պղտորին, անբնական և անընդհատ դոչմամբ ջրհորայն բերանէն դուրս կը ցայտեն, այնպէս որ տեսողաց սիրտ ու սարսափ կ'ազդեն։ Այս ցայտումն այնքան զօրաւոր կերպիւ տեղի կ'ունենայ որ ջրերն ջրհորէն գրեթէ 30 մեթր հեռաւորութեամբ գետինը սրսուելով իբրև կէս մեթր և երբեմն աւելի տրամագծով ակ մը և 2–3 մեթր լայնութեամբ հեղեղ մը կը կազմեն որ 2–3 շաբաթ և երբեմն աւելի ցայտման զօրութեան համեմատ շարունակ ջուր կ'արտահոսէ, այս ջուրն վերջապէս կը թափի ի Մեռեալ ծովն (†)։ Ջուրը հեռագիտակ կը նուազի երբ անձրևներն դադրին։

Երբ օդերն պարզուին՝ ժողովուրդն կըսկսի գիսել անդ երամ երամ 'ի խնդ և 'ի հրճուանս։ Այսպէս այս ջրհորն ժողովրդեան համար ուրախութիւն մէ և զուսանք։ մանաւանդ՝ Երուսաղէմ քաղաքին, քաղաք մը որ զուրկ է երկրաբուղխ աղբիւրներէ, հակառակ իւր ունեցած գերագոյն, երկնացնցուղ և բազմականի հոգեւոր աղբերաց։

(*) ՍԵԼՎԱՆ՝ Ցոբայ հորի մօտ աղբիւր մ'է յորմէ՝ ղուսացուցեալ կոյրն եւ ողջացաւ Քրիստոսի հրամանաւ. այս աղբիւրն առուռներն ընդհանրապէս ցամքած կը դիտի, իսկ կէս առուռ առեղներն հազիւ ճշանակելի ամմամբ տակաւ առ տակաւ մինչի յորդել եւ զնուռ իւր առաջանն. կ'ըսուի թէ այս պահուն ղուսացուցեալ անդ կոյրն։

(†) ՄԵՌԵԱԼ ԾՈՎԸ Երուսաղեմայ արևելեան կողմն 8-9 ժամ հեռաւորութեամբ կը գտնուի, սա Սոդոմ Գոմորի տեղն է. ջուրն այնքան թանձր է որ կարելի չէ վրան ման ընալեցնել։

Գ. 3

Ամերիկայի Գոլիֆոռնիոյ նահանգին Ֆրէզնո-Սիթի քաղաքին մեր մասնաւոր թղթակիցն հետեւեալ տեղեկութիւններն կը հաղորդէ մեզ, ի մասին տեղւոյն Հայ գաղթականութեան։

Ֆրէզնո-Սիթի, 27 Դեկտ. 1888

Ֆրէզնոյի հայ գաղթականութիւնը թուականս 6 տարի առաջ սկզբնաւորութիւն ունեցաւ, հինգ տարի առաջ 100 ի չափ թիւ մը կազմեց. և այդ թիւը այժմս բաղդաւոր թիւն է. ասոնք սկզբան իրենց գալուն վրայ անհունս գոչեցին. և ոմանք պատրաստուեցան եւ դառնալ իրենց հայրենիք, բայց բնական արդելքներ զիրենք եւ բռնեցին հոս մնալու։ Գաղթող հայերը շատ քիչ դրամագլուխ ունէին. որոնք վերջապէս համոզուեցան քաղաքին մէջ տան տեղեր՝ և քաղաքին բոլորտիք՝ հողայնն կալուածներ գնելու. և որովհետեւ Ֆրէզնոյ գաւառը իր բերրութեամբ հողերով և առատ ջուրերով ու մաքուր և առողջարար օդով մեծ և հարուստ ապագայ մը կը խոստանար, նորընակ հայ բարեկամաց յոյսը ի դերեւ չելաւ։

Հին տարի առաջ որ Ֆրէզնոյի բնակիչները հաշիւ 2 000 ի կը հասնէր և ամբողջ գաւառը 14 000 ի. այսօր Ֆրէզնոյ քաղաքը 10 000 և գաւառը 40,000 բնակիչ ունի. կալուածոց գները աւելի բազմապատկեցաւ, 1887 ին Ֆրէզնոյի կալուածները 17,000,000 թալէրի դին ունէր (որ կառավարութեան կարգ) գինն է տարով տարբերը կ'որոշուի. և որ իրական գնոյն ½ը չէր ըլար). բայց 1888 ին 33 միլիոններու հասաւ. որ առ ալ իրական արժէքն խիստ պակաս է. բնական է որ հայերուն կալուածներն ալ արժէքաւորեցաւ. հայոց առած մէկ տան տեղը որ 80–100 թալէր կարժէր, բարձրացաւ 2000 կամ 3000 ի. և եթէ երկիր որ 90 թալէրի գնուած էր բարձրացաւ 1000–2000 ի. առանկով՝ մեր հայ գաղթականութիւնն յանկարծակի մեծ հարստութեան տիրացաւ։ Հայերին սկզբան դրամագլուխը որ 8000–10000 թալէրէն աւելի չէր, հիմայ 200000–300000 հատ. և հայերուն գործունէութիւն և խնայողութիւնը աւելի փայլուն ապագայի պիտի տանի զիրենք։

Հայերը զատ եւ չքոյց ժողովուրդ են. թէպէտ տեղացոց առջին բարձր համարում չունին, բայց անպատիւ ալ չեն. Հայերին թիւը իրենց ձգած քաղաքներով հետեւեալներն են.

	Ցեւոր.	Արու.	Էգ.
1. Արապկիրցի.	—	2	—
2. Բաղէշցի.	1	5	3
3. Եօզղատցի.	4	18	11
4. Երզնկացի.	0	4	0
5. Տրապիզնցի.	0	1	0
6. Թօքատցի.	1	3	2
7. Լէռնցի.	0	1	0
8. Կարինցի.	4	14	12
9. Կեսարացի.	2	5	4
10. Մարաշանցի.	6	29	11
11. Մարաշցի.	1	2	2
12. Մուշեցի.	1	5	3
13. Մալաթիացի	0	1	0
14. Խարբերդցի		2	1
15. Ուրֆացի.	0	2	0
16. Սիսցի.	0	1	0
17. Նիկոմիդացի	0	2	0
18. Պաֆրացի.	0	2	0
19. Ռուսանցի	0	1	0
20. Տզրնկրացի.	1	6	2
Գումար ..	22	106	51

Նոր գաղթող Հայերը այսուհետեւ այս չի գար թէ առաջնոց պէս պիտի յաջողին։

Քաղաքին և մօտակայ տեղերուն հողերը բարձր գներ ունին. բայց նորեկ Հայ մը եթէ 1000–2000 թալէռով դայ կրնայ գնել պատրաստուած 20 էքր այգի և ծառաստան 3–5 հազար թալէրով քաղաքէն 4–5 մղոն հեռաւորութեամբ որուն եկամուտը 1–2 հազար թալէռի կհասնի տարին, որ առ ալ մեծ շահ մը է բաղդատմամբ տառկաստանի շահերուն. բայց ան Հայերը որք դրամագլուխ չունին. հոս գալու չեն. բայց թէ որ նահապետական կեանքը իրենց համար կրնան ընտրել, Գալիֆորնիոյ մէջ շատ երկիրներ կան որ կառավարութեան կ'վերաբերին և ամէն անձ կրնայ այդպիսի երկիրներու տէր լինել շատ քիչ դրամագլխով, ամէն Ամերիկացի, կամ ամերիկացի լինելու երդուեալը կրնայ 320 էքր երկիր առնել և իւրացնել շատ քիչ ծախքով, ամէն տեղ կեանք և ստացուածք բոլորովին ապահով է։

Մ. ՄԱՐԴԱՐԵԱՆ

ԱՅԼԵՐԱՅԼՔ

ՆՈՐԱԼՈՒՐՔ

Խօսող Լրագիր։

Լոնտոն՝ Էլեկտրականութեան թագաւորն, ինչպէս Նիւ-Եորդէն կը գրեն, իւր կատարելագործեալ ձայնագրին (phonograph) միջոցովը պիտի կարող ըլլայ մօտերս խօսող լրագիր մը հրատարակել։ Որչափ ալ այս ուրն անհաւատալի երեւայ, այս ըստայգ է որ այս վախճանաւ ընկերութիւն մը կազմուած է (Talking News Paper Comp.) անուամբ։ Այս լրագիրն ոչ միայն անոնց սիրելի պիտի ըլլայ, որոնք կարդալ չեն գիտեր, այլ և ամէն մարդ պիտի կարող ըլլայ առաւոտ նախաճաշ լրած ժամանակ հրամայել իւր ձայնագրին՝ որ պատմէ իրեն նոյն օրուան նորաստեղծքն։ Ինչպէս ուրիշ անգամ գրուած ենք, Էդիսոն ձայնագիրքն վերջերս շատ կատարելագործած է։ Օրինակի համար վաճառական մը՝ որ իւր ընկերին գրելիք մ'ունի, պէտք է գրելիքն բարձր ձայնիւ իւր ձայնագրին վրայ գրուցել։ Ձայնագիրն լաստն թղթի մը վրայ նոյն բարկին կը գրոշմ. նոյն թուղթը կ'առնուի եւ նամակի ծանկութի (Envert) մէջ կը դրուի կ'ուղարկուի. ընդունողն իւր ձայնագրին վրայ կ'անցուցնէ նոյնն և մը-տիկ կ'ընէ բարեկամին պատգամները։ Էդիսոն հիմայ այս ձայնագրին այնչափ կատարելագործած է՝ որ կրնայ 20.000 սոյնպիսի թերթեր գրոշմել։ Այս թերթերը կ'ըլլան ահաւասիկ խօսող լրագիրն։ Այսպէս կը գրեն ամերիկեան լրագիրներն։ Մենք չենք կրնար ստուգութեան առ այժմ վկայել, բայց եթէ ստուգուի՝ կ'արժէ այս նորանշան լրագրին բաժանորդ դրուիլ։

Մտացածին երկաթուղի-օդապարիկ։

Յուլիոս Էմիլ Թաղիացի ճարտարագէտն օդապարիկ մը հնարած է, որ երկաթուղայ վրայ կը շարժի։ Օդանաւին տակը հորիզոնական և ուղղահայեաց գրիւք օդոյ անիւներ դրուած են, որոնց միջնորդութեամբ և երկաթուղոյ վրայ շարժիչ մեքենայի մը օգնութեամբն՝ օդոյ մէջ ծփացող օդապարիկը կը շարժի։ Կ'ըսուի թէ այս կազմածը մէկ ժամուան մէջ 400 քիլոմեթր ճամբայ պիտի կարենայ կտրել անցնիլ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Յանախադէպ վտանգ մը։

Եթէ ուտելու կամ խօսելու առեն բան մը «սխալ կոկորդը» գայեր է, ամենապարզ միջոցն է ձեռքերը վեր ամբառնալ զէպ ի ձեզուենը։ Այսպիսոյն ընչաութիւնն արագիլուելով՝ աչուքները դրեթէ դուրս կուգան. երեսը կ'ուռի և կը կարմրի խաղողի նման, և թոքին անյարմար կերպ'ուրք, եւայլն, նոյնին խորքը կ'իջնան քանի անգամ որ ստիպուած չունչ առնու։ Բնականապէս ան միջոցս յետաշրջութիւն մը կ'սկսի. թոքը իրեն չ'վերաբերող մարմինը չի կրնար պահել, ուստի կը ճղնի փսխել։ Թեւերը վեր ամբառնալովն՝ կրծոց դիրքը կը բարձրանայ, թոքի դիրքը կը փոխուի, որով դիւրաւ կըրնայ իրեն չ'վերաբերեալ նիւթերը դուրս հանել։ Սովորաբար առաջին զօրաւոր հաղարը դուրս կը մղէ սիրտ ճամբէ գացող նիւթերը և եղկելին կ'ազատի։

Հանդիս Ամսօրեայ

ԵՐԿՕՐԵԱՅ ԿԵՆԴԱՆԱՅՆԱԼ ՄԵՌԵԼ ՄԸ

Պէռլինի մէջ հարուստ կալուածատիրոջ մը երիտասարդ որդին ջղային տենդով մը մեռած է այս վերջին օրերս։

Հանգուցեալին մարմինը երկու օր պահուած է տան մէջ, և երրորդ օրը պատրաստութիւններ են տեսնուած զայն թաղելու։

Տան հաւատարիմ շունը նոյն օրն միջոց մը դանալով կ'մտնէ հանգուցեալին սենեակն ուր մարդ չ'կար, և եղնելով նորա վրայ կ'սկսի լզել նորա երեսը, պարանոցը եւայլն։

Այդ միջոցին շունը կ'սկսի ճանկռտել հանգուցեալին երեսը, ուրկէ մաքուր արիւն կ'հոսի։

Ծերունի հայրն հանգուցեալին սենեակն մտնելով մեծ զարմացմամբ կ'տեսնէ արիւնն, անմիջապէս կ'հրաւիրէ տան բժիշկն որ կ'վաւերացնէ թէ հանգուցեալն երկարատեւ ուշաթափութիւն ունեցած է։

Բժշկական եւանդուն օգնութեան շնորհիւ, հիւանդն շատով ուշաբերուած է, և այժմ մօտ է բոլորովին առողջանալու։

ՈՒՍՈՒՄՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ Ք. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԻՏՍ ԶԱՐԳԱՑԵԼՈՅ ԵՒ ՆՈՐԸՆԾԱՅԻՑ

Մրատեց ԱՐԲԻԼԻԲՕՍ

ՍԵՄ(*)

Ի վաղուց անտի անհամբեր սրտիւ առիթի մը կ'սպասէի ի լոյս ընծայել սոյն օգտակար գործն որ իւր ամէն թերութեամբն հանդերձ կարէ նպաստաւոր լինել Քաղաքակրթասէր և Յառաջդիմասէր սիրելի Ազգիս, որուն բարբարութեանը համար եթէ պէտք ըլլայ մարս, մորուքս և եղունքներս խլ ղոհ ընել ուխտած եմ անդէն ի յորովայնի մօր իմում։

Գործն թէեւ ըստ ինքեան ծանօթ է ամենուն, սակայն այդ գործը աւելի կանոնաւոր և կատարեալ ճշտութեամբ ուսանելու և ըստ այնմ՝ վարուելու համար պէտքն զգալի էր արդէն որ չունէր մէն դասագիրք մը զոր կարդալով մարդ մը գիտնար թէ Եւրոպայի առջեւ ամօթով չելլելու և քաղաքակրթի աղգ կամ մարդ անուն ստանալու համար ինչ կերպով շարժելու է, ինչպէս հագուելու. սրգուելու է ինչպէ՞ս պառկելու ելլելու է, ինչպէ՞ս ծխելու մխելու է, ինչպէ՞ս խօսելու ճառելու է, ինչպէ՞ս ուտելու խմելու է, ինչպէ՞ս ծախսելու մնխելու է, ինչպէ՞ս պատելու քալելու է, ինչպէ՞ս խնդալու ծիծաղելու է, ինչպէ՞ս սգալու լալու է, ինչպէ՞ս կեղծելու կեղծաւորելու է, ինչպէ՞ս հաւատալու հաւատցնելու է, ինչպէ՞ս մեռնելու մեռցնելու է, վերջապէս ինչպէ՞ս ծնելու է ինչպէ՞ս մեծնալու է և ինչպէ՞ս վերջանալու է...։

Ահա այս պատճառաւ ներկայ գործս իբրեւ Դասագիրք շատ մը կլուխներու բաժնելով հետզհետէ մաս առ մաս պիտի հրատարակեմք, վստահ ըլլալով որ ազնիւ և ընթերցասէր ազգայինք իրենց ներողամտութեամբն շնորհ պիտի ընեն և բարեհաճին զմեզ քաջալերելով մեր ձեռնարկին մէջ, առիթ տան յառաջիկայն մէջ աւելի կարեւոր և ընդարձակ գործերու և Դասագիրքերու հրատարակման պատրաստուիլ։

ՄՐՈՏԻՉՆ

ԹԻՒ ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

(*) Եթէ ոեւէ գործ մը սկսելու համար ազատ է հեղինակը ԳՈՒՌՆ ով մը սկսիլ, ես ինչո՞ւ ազատ չըլլամ նախ ՍԵՄ ին վրայ կոխել։

նանալ իմ խօսեցելոյն հետ, զոր շատ ժամանակէ ի վեր երեսի վերայ թողած ատանդական կ'թափառէի կարեւորութիւն չ'ընծայելով նորա ողբին ու կոծին։

Մեր հարսանեաց հանդէսն խիստ պարզ եղաւ, որուն ամենամեծ զարդն էր մեր ԱՆՐՆ. այժմ երկու զաւակներ ունինք, մին՝ Արամ, մի ան՝ Արմենուհի։

Երազն ուրեմն խաղաղեցոյց կենաց յոյզեր, երջանիկ տարիներ շնորհելով մարդոյ ընտանեաց մի. երա՛զ՝ այր յիշատակն կ'ասնեմք ամէն տարի։

(Շարունակելի)

ԱՅԼԵՐԱՅԼՔ

ՆՈՐԱԼՈՒՐՔ

Խօսող Լրագիր։

Լոնտոն՝ Էլեկտրականութեան թագաւորն, ինչպէս Նիւ-Եորդէն կը գրեն, իւր կատարելագործեալ ձայնագրին (phonograph) միջոցովը պիտի կարող ըլլայ մօտերս խօսող լրագիր մը հրատարակել։ Որչափ ալ այս ուրն անհաւատալի երեւայ, այս ըստայգ է որ այս վախճանաւ ընկերութիւն մը կազմուած է (Talking News Paper Comp.) անուամբ։ Այս լրագիրն ոչ միայն անոնց սիրելի պիտի ըլլայ, որոնք կարդալ չեն գիտեր, այլ և ամէն մարդ պիտի կարող ըլլայ առաւոտ նախաճաշ լրած ժամանակ հրամայել իւր ձայնագրին՝ որ պատմէ իրեն նոյն օրուան նորաստեղծքն։ Ինչպէս ուրիշ անգամ գրուած ենք, Էդիսոն ձայնագիրքն վերջերս շատ կատարելագործած է։ Օրինակի համար վաճառական մը՝ որ իւր ընկերին գրելիք մ'ունի, պէտք է գրելիքն բարձր ձայնիւ իւր ձայնագրին վրայ գրուցել։ Ձայնագիրն լաստն թղթի մը վրայ նոյն բարկին կը գրոշմ. նոյն թուղթը կ'առնուի եւ նամակի ծանկութի (Envert) մէջ կը դրուի կ'ուղարկուի. ընդունողն իւր ձայնագրին վրայ կ'անցուցնէ նոյնն և մը-տիկ կ'ընէ բարեկամին պատգամները։ Էդիսոն հիմայ այս ձայնագրին այնչափ կատարելագործած է՝ որ կրնայ 20.000 սոյնպիսի թերթեր գրոշմել։ Այս թերթերը կ'ըլլան ահաւասիկ խօսող լրագիրն։ Այսպէս կը գրեն ամերիկեան լրագիրներն։ Մենք չենք կրնար ստուգութեան առ այժմ վկայել, բայց եթէ ստուգուի՝ կ'արժէ այս նորանշան լրագրին բաժանորդ դրուիլ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Յանախադէպ վտանգ մը։

Եթէ ուտելու կամ խօսելու առեն բան մը «սխալ կոկորդը» գայեր է, ամենապարզ միջոցն է ձեռքերը վեր ամբառնալ զէպ ի ձեզուենը։ Այսպիսոյն ընչաութիւնն արագիլուելով՝ աչուքները դրեթէ դուրս կուգան. երեսը կ'ուռի և կը կարմրի խաղողի նման, և թոքին անյարմար կերպ'ուրք, եւայլն, նոյնին խորքը կ'իջնան քանի անգամ որ ստիպուած չունչ առնու։ Բնականապէս ան միջոցս յետաշրջութիւն մը կ'սկսի. թոքը իրեն չ'վերաբերող մարմինը չի կրնար պահել, ուստի կը ճղնի փսխել։ Թեւերը վեր ամբառնալովն՝ կրծոց դիրքը կը բարձրանայ, թոքի դիրքը կը փոխուի, որով դիւրաւ կըրնայ իրեն չ'վերաբերեալ նիւթերը դուրս հանել։ Սովորաբար առաջին զօրաւոր հաղարը դուրս կը մղէ սիրտ ճամբէ գացող նիւթերը և եղկելին կ'ազատի։

Հանդիս Ամսօրեայ

ԵՐԿՕՐԵԱՅ ԿԵՆԴԱՆԱՅՆԱԼ ՄԵՌԵԼ ՄԸ

Պէռլինի մէջ հարուստ կալուածատիրոջ մը երիտասարդ որդին ջղային տենդով մը մեռած է այս վերջին օրերս։

Հանգուցեալին մարմինը երկու օր պահուած է տան մէջ, և երրորդ օրը պատրաստութիւններ են տեսնուած զայն թաղելու։

Տան հաւատարիմ շունը նոյն օրն միջոց մը դանալով կ'մտնէ հանգուցեալին սենեակն ուր մարդ չ'կար, և եղնելով նորա վրայ կ'սկսի լզել նորա երեսը, պարանոցը եւայլն։

Այդ միջոցին շունը կ'սկսի ճանկռտել հանգուցեալին երեսը, ուրկէ մաքուր արիւն կ'հոսի։

Ծերունի հայրն հանգուցեալին սենեակն մտնելով մեծ զարմացմամբ կ'տեսնէ արիւնն, անմիջապէս կ'հրաւիրէ տան բժիշկն որ կ'վաւերացնէ թէ հանգուցեալն երկարատեւ ուշաթափութիւն ունեցած է։

Բժշկական եւանդուն օգնութեան շնորհիւ, հիւանդն շատով ուշաբերուած է, և այժմ մօտ է բոլորովին առողջանալու։

ՈՒՍՈՒՄՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ Ք. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԻՏՍ ԶԱՐԳԱՑԵԼՈՅ ԵՒ ՆՈՐԸՆԾԱՅԻՑ

Մրատեց ԱՐԲԻԼԻԲՕՍ

ՍԵՄ(*)

Ի վաղուց անտի անհամբեր սրտիւ առիթի մը կ'սպասէի ի լոյս ընծայել սոյն օգտակար գործն որ իւր ամէն թերութեամբն հանդերձ կարէ նպաստաւոր լինել Քաղաքակրթասէր և Յառաջդիմասէր սիրելի Ազգիս, որուն բարբարութեանը համար եթէ պէտք ըլլայ մարս, մորուքս և եղունքներս խլ ղոհ ընել ուխտած եմ անդէն ի յորովայնի մօր իմում։

Գործն թէեւ ըստ ինքեան ծանօթ է ամենուն, սակայն այդ գործը աւելի կանոնաւոր և կատարեալ ճշտութեամբ ուսանելու և ըստ այնմ՝ վարուելու համար պէտքն զգալի էր արդէն որ չունէր մէն դասագիրք մը զոր կարդալով մարդ մը գիտնար թէ Եւրոպայի առջեւ ամօթով չելլելու և քաղաքակրթի աղգ կամ մարդ անուն ստանալու համար ինչ կերպով շարժելու է, ինչպէս հագուելու. սրգուելու է ինչպէ՞ս պառկելու ելլելու է, ինչպէ՞ս ծխելու մխելու է, ինչպէ՞ս խօսելու ճառելու է, ինչպէ՞ս ուտելու խմելու է, ինչպէ՞ս ծախսելու մնխելու է, ինչպէ՞ս պատելու քալելու է, ինչպէ՞ս խնդալու ծիծաղելու է, ինչպէ՞ս սգալու լալու է, ինչպէ՞ս կեղծելու կեղծաւորելու է, ինչպէ՞ս հաւատալու հաւատցնելու է, ինչպէ՞ս մեռնելու մեռցնելու է, վերջապէս ինչպէ՞ս ծնելու է ինչպէ՞ս մեծնալու է և ինչպէ՞ս վերջանալու է...։

Ահա այս պատճառաւ ներկայ գործս իբրեւ Դասագիրք շատ մը գլուխներու բաժնելով հետզհետէ մաս առ մաս պիտի հրատարակեմք, վստահ ըլլալով որ ազնիւ և ընթերցասէր ազգայինք իրենց ներողամտութեամբն շնորհ պիտի ընեն և բարեհաճին զմեզ քաջալերելով մեր ձեռնարկին մէջ, առիթ տան յառաջիկայն մէջ աւելի կարեւոր և ընդարձակ գործերու և Դասագիրքերու հրատարակման պատրաստուիլ։

ՄՐՈՏԻՉՆ

ԹԻՒ ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

(*) Եթէ ոեւէ գործ մը սկսելու համար ազատ է հեղինակը ԳՈՒՌՆ ով մը սկսիլ, ես ինչո՞ւ ազատ չըլլամ նախ ՍԵՄ ին վրայ կոխել։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ
ԴԱՍ ԱՌԱՋԻՆ
ՀԱՐՅՈ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌԱՋԻՆ

Ի՞նչ կը սովրեցնէ Ք(†)Ռեալականութիւնը։

—Ռ. Ռեալականութիւնն այն դիտութիւնն է որ կը սովրեցնէ կամ մատչելի կուտայ, թէ ինչ կերպով լրացնելի է մարդս իւր կենաց շրջանը։

Այս դիտութիւն քանի դիւաւոր մասերու կը բաժնուի։

—Այս դիտութեան դլխաւոր կամ պոչը լայնի չինարէ բլլալ, որովհետև հոչակաւոր թիւերու պէս անհուն են նորա դլխները, իսկ պոչը պրչակի կարես ասիրդ. ուելի կ'երկինայ։

Այդ դիտութիւնն ուսանելով մեր աղդայինք ի՞նչ շահ պիտի ունենան։

—Որովհետև մեր աղդային յատուկ բարքերն ու սովորութիւններն ուսնուցուցայն, ընդհանրապէս շատ յուսի և շատ խորհ երևցած են մեր աչքին. ուստի ընդօրինակելով և հետևելով Եւրոպացւոց ընդհանրապէս այն ամէն սովորութեանց խէ, որոնցմէ իրենք իսկ կը խորշին, աւելի պիտի ընծայենք նոցա մեզ համար ըսել տալու թէ, այս աղդը ոչչակի ընդունակ է քաղաքակրթութեան, ինչ աքանչելի կերպով (կը մոռնան իրենց լեզուն) կը խօսին ամէն կարդի Եւրոպական լեզուներ, ամէն պարագայի մէջ մեզի նմանիլ կուզեն, և կան պարագայներ՝ յորս մենք աւելի յառաջ դացած են . . .

Կեցցե՛ն . . .

(Շարունակելի)

ՕԴԻՆ ՄԷՋԷՆ ՆՈՐԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԱԾՔ

(Շարունակութիւն Տես Թիւ. Բ.)

Ելէ՛ք ապաք . . . օ՜ն արիանցէ՛ք . . . ելէ՛ք ինչ պառկեր էք առատու եղաւ . . .։

—Հայրիկ մնա կուզեմ . . .

—Լաւ ապաս ճայնդ կարէ՛ առատու ըլլայ քեղի մնա կ'առնեմ . . .։

—Հայրիկ դու ըսիր որ առատու եղաւ . . . մնա կուզեմ.

—Մարդ Աստուծոյ. ի՞նչ պատահեցաւ նորէն . . .

—Ելէ՛ք նստեցէ՛ք ձեզի կարեւոր ըսելիքներ ունիմ։

Ամենքն ալ ալարնցան, ապուշի պէս երեսս ի վեր կը նայէին. միայն դուրսէն երրորդ անձնաւորութիւն մը պէտք էր հասկնալու համար թէ ապրեցաք ապուշը պրեանի՞ն էինք . . .։

Ինչ և է բան սովորութեան քաղքենիս խմեցինք սիկառնիս ծխեցինք, հազայի փունդ ատայի և քանի մը անդամ հրամ՛ ընելէս վերջը, ինչպէս որ ամէնի՝ քարոզիչներու սովորութիւն է, բերանս բացի։

Ով իմ սիրեցեալ դուակս համբերատար մայրիկը.

Քեղի մնաս բարով ըսելու համար արիանցուցի . . .

—Իւհիւ . . . իւհիւ . . .

—Լալ պոռալ պէտք չէ, հոդին տակը մոռալու չեմ. այլ երբիրս վրայ պիտի ելլեմ. յօդս պիտի վերանամ . . .։

Յանուն Յիսուսի Քրիստոսի. ել ծո՛ աղայ. ել երեք ծունկ աղօթք ըրէ. երեսդ խաչ հանէ՛.

Կնիկ, խելքդ դլուխդ ժողվէ, աղօթքդ խենդերուն համար կ'ելնեն, ըսին ալ մեռնողներուն, որ այլ ևս չ'պիտի վերադառնան ես ո՛չ խենդ եմ և ո՛չ քու դիտցած կերպովդ պիտի մեռնիմ. այլ առժամանակեայ կերպով պիտի հեռանամ քենէ, քիչ մը ժամանակ օդին մէջ պիտի ապրիմ. կատաս ըրեր եմ ունեցածս չունեցածս քեզի և զաւակս ձգեր եմ. նամանաւանդ կտակիս մէջը գրած եմ որ օր մը եթէ ինձի պէտք ունենան, հրացանի մը մէջ կապարի տեղ 50 ոսկի պիտի լեցնեն և դէպ ի երկինք պայթեցնեն պէս նորէն յերկիր պիտի իջնամ։

—Ունեցածս չունեցածս կըսես նէ ինչ ունիս որ վրաս պիտի ընես. առնտէրը երիս առնական կուզէ, պախալը կուզէ, հացագործը, մսավաճառը կուզէ. եկածը զատիկ է, ոտան վրայ դլուխս կուզէ, ես դլխարկ կուզեմ. սա կուզեմ նա կուզեմ մեղ որի՞ կը ձգես կերթաս. ես անանկ բան չդիտեմ. տէրտերը պատ'ած տուեն ինձի ըսաւ որ հայրդ մայրդ թողուս երկանդ եաւէն պիտի երթաս. ես քեղ սրկէ հոս չեմ թողուր, դժոխք ալ երթաս հետդ պիտի դամ։

—Կնիկ, դու սխալ հասկցեր ես, տէրտերը այդ խօսքը ինձի ըսաւ և ոնկից պատ. դժոխք երթամ նէ հետս դալ դիւրին է, բայց ես հոն երթալու չեմ. ես վեր պիտի ելլամ օդին մէջ, կը հասնիմ՝ օդին մէջ պիտի ապրիմ։

—Մինոյն բանն է, այս տեղ օդ կըլլեալս, ես ալ քեղի հետ յօդս կելլեմ, չէ՞մի ոչ ընկեր ենք։

—Դէշը այդ է որ աղէկ չենք ինկեր. դու դպրոցական չես. դու օդին մէջ ապրելու եղանակը չես դիտեր. օդային ի՞նչ ըսել է չդիտես. ա՜հ, օ՛դ . . . օ՛դ . . .։

—Իւհիւ՛ . . . իւհիւ . . . իւհիւ՛ . . . .

—Մի՛ լար խուշիկս մի՛ լար. սա դորձին մէջ անանկ բաներ կայ որ քեղի չեմ կարող հասկցնել. այսինքն ես ալ հասկցած չեմ. ամէն բան չեմ կարող ըսել. այսինքն բան չկայ որ ըսեմ. բայց հոդ մի՛ ըներ ես երթամ նէ քեղի համար ուելի ադէկ ապադայ մը պիտի բերեմ։ հաւատա՛, քեղի անհատնում ոսակ պիտի բերեմ, ալ ինչպէս կուզես այնպէս վատնէ՛, կեր, խմէ՛, պըտչտէ՛, հագուէ՛, սրդուէ՛, կառք, ծառայ, ամէն բան քեղի համար։

—Այդ օդին մէջ աշխա՞րհք կայ, մարդ կայ, շուկայ և գո՞րծ կայ որ ոսակ պիտի վաստակիս . . .

—Հապա ճանիկս. այդ դաղտնիք մ'է որ քեղ չեմ ուզեր ըսել. մանաւոր օդային աշխարհք կայ. օդային մարդիկ կան, օդային դորձ, օդային ապրանք, օդային երջանկութիւն, օդային մասածում, ա՜հ ինչ երջանիկ կեանք է օդային կեանքը. ա՜հ եթէ մեր քաղաքին մէջը բաղնիք ։ 0 եր դտնուէին անանցիր քեղի ոչրան՝ անհատնում օդային իրեր կը շարէի. բայց ինչ և է հոդիս, դու խօսքս մտիկ ըրէ մի՛ տարմիրտես քիչ առենէնէն առաջ Աստուած այդ օդային կեանքէն ալ դղուելով նորէն կը վերադառնամ և այնուհետև շատ լաւ և կանոնաւոր կերպով կապրինք միասին, առ այժմ մը նաք բարով . . . մնաս բարով ադաս . . .

—Հայրիկ մանա կուզեմ դեռ առատու չեղաւ . . . .։

—Գլխարկս չմոռնաս բարեկամ . . .

—Մնաք բարեաւ սիրեցեալքդ իմ. ղուի ըսի ճրագին, առադասաներս բացի, աչքերս դոցեցի և սկսայ վերանալ։

[Շարունակելի]

(†) Ռաղաքակրթականին համառօտագրութիւնն է։

ՎԱՐՊԵՏՆԵՐՈՒ ՏՕՊՐԱԿԷՆ

Ի՞նչ տարբերութիւն կայ Ռօշիլտի և Սողոմոն խնասուանին մէջ։

—Սողոմոն Հրէից Թագաւորն էր. իսկ Ռոշիլտ Թագաւորներուն Հրէան է։

—Ի՞նչ տարբերութիւն կայ Արշակաւանի և Եգիպտոսի մէջ։

—Հոն՝ գողերն ու մարդասպանները կ'ապաստանէին. իսկ հոս կնիկներն և երիկներն ձգողներն կ'ապաստանին։

—Ֆանատեղծներուն և քերթողներուն դլխաւոր դրամագլուխն ի՞նչ է։

—Բան հատ ՈՂ. քառասուն հատ ԵՒՍՅԼՆ. և ութսուն հատ ԿԷՏ . . .։

—Ինչի՞ համար Պահոց օրերը կենդանիներու միս չենք ուտեր։

—Որովհետև այն օրերուն մէջ ուրիշ տեսակ աշխարհային զուարճութիւններ ալ դիւրաւոր ըլլալով մարդու միս ուտելու զլաղած ենք ընդհանրապէս։

—Ինչի՞ համար մարդս ուրիշին աչքին մէջի շիւղը կը տեսնայ, իսկ իր աչքին մէջի դերանը չ'տեսնար։

— Որովհետև աչքն իւր աչքին մէջ նայելու դիւրութիւն չունի։

—Աշխարհս ե՞րբ պիտի տեսնէ ընդհանուր խաղաղութեան երես։

—Երբ ամէն խնդիր թուաբանական հաշիւով լուծուի։

—Ի՞նչի՞ համար ցորեն կը ցանես և բամպակ չ'բուսնիր։

—Այդ խնդրոյն պատասխանը անոնք կրնան տալ, որոնք դպրոցին մէջ միայն ուղղական բան կը սովրին և քաղաքագէտ դուրս կելլեն։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Համեստ ընտանիքի զատակ Հայ բարեկիրթ Օրիորդ մը՝ որ ի Կ. Պոլիս Բերայի Գերմանական դպրոցին շրջանաւարտ եղած է. գիտէ եռ՝կը սովրեցնէ ԲԻԱՆՈ. կը դասաւորուի Հայերին, Դպրոցներուն եռ Տաճկերուն, կը խօսի Յունարէն եռ Իտալերէն յաջողակօր. կը փափաքի ընտանեաց մէջ կամ ի վարժարան որոշեալ պայմանաւ պաշտօնավարել։

Փափաքողք դիմեն առ Խմբագրութիւնս։

ՍԹԱՄՊՕԼ ՅԷՍԻ

Պունտան ադէմ մալիւմ օլտուղս։ վէճհ իւզրէ, Զապթիյէ ճասատէրինտէ վաղը Շամը Վէքեալէսի դարշուանտաքի մաղազամընդա Սթամպօլուն էնվայի թոհաթիյէ վէ խուրտավոթա տայիր օլան մալլէրտէն ֆիրուխթ խոտա, բաղկթլու միշթէրիլէրիմիզի սէմնուն իթթիհիմիզ կիպի, պու տէֆա տախի այնի մահալտէ Սթամպօլուն վէ Էվրօբանըն հէր նէվ պիրինճի ֆէկիրինտէն սաթըլմաղտա վէ հէր պիչիմ ֆէս Գալըպլարը պուլունմաղտա օլտուղու իլան օլունուր։

Կ. ԷՐՄԷՐՃԵԱՆ

ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ
Տ. ՍՈՍՃԵԱՆ

ՀԵՌԱԴՐԱՏԱՆ ՓՈՂՈՑ Յ'ԱՂԵԲՅԱՆԴՐԻԱ.

Կը պատրաստուին՝ Այցատոմս, Էթիքէթ, Հրաւիրագիր, Վաճառականական ամէն տեսակ թղթեր ամէն լեզուաւ՝ խիստ վայելուչ եւ դիւրամատչելի գներով։

ԳՈՒՆԱՒԻՐ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԾԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆ
"ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ"
Դ. ՏԱՐԻ, 1889։

ՀԱՆԴԷՍԸ կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը և կը բովանդակէ՝

1· Հին և նոր հայ դրականութեան, պատմութեան եւ այլն վերաբերեալ ազդային ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ընդարձակ յօդուածներ, Եւրոպայի հեղինակաց հայ ազգին վրայ գրած նոր յօդուածոց և գրոց թարգմանութիւններ, գիտնական հատուածներ եւ այլն։

2· ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ յօդուածներ։

3· ԲԱՐՈՅԱԿԱՆ վէպեր ու հատուածներ։

4· ԱՅԼԵՒԱՅԼԲ, այն է՝ գիտնական աշխարհի նորանոր գիւտեր, գիտնական և տնտեսական նորագոյն մտքեր տեղեկութիւններ եւ այլն։

5· ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, ամսոյ մը միջոցին Եւրոպական քաղաքականութեան առած դրից համառօտ տեսութիւն։

Հանդիսի այս Դ· Տարին աւելի ճոխագոյն պիտի ըլլայ քան նախընթաց տարիներն, նոր և հետաքրքրական յօդուածներով, յաւելուածներով, ժամանակակից ոչանաւոր անձնաւորութեանց պատկերներով, եւ այլն։

Յաւելուածներու յաճախութիւնը բաժանորդաց շատութենէն կախում ունի։

Բաժանորդութեան դինն է՝ ճամբու ծախքով՝ տարեկան 8 ֆր· — 4 ռբ· — 4 ֆիորին։

Խմբագրութեան հասցէն է՝ a la rédaction de la rue "Hartes" v e na (autriche).

Այս տարի ալ վիճակաւ այլեւայլ դրքեր պիտի տրուի բաժանորդաց, որուն վրայ տես Հանդիսի 1889 Թիւ 1,

☞ Խմբագրութիւնս որոշած է Հանդիսի Դ· Տարւոյն շրջանէն տասն օրինակ նուիրել ազդային կարօտ վարժարանաց՝ վիճակահանութեամբ։ Այն վարժարանք՝ որ կը բաղձան մասնակցիլ վիճակահանութեան, պէտք են՝ վարժարանին վարչութեան կնքոնը վաւերացեալ խնդրագիր մատուցանել խմբագրութեանս։ Խնդրագիրք փութով հասնելու են խմբագրութեան ձեռքն։

☞ 1889 տարւոյ Հանդիսի Յունուար 1 Թիւն ուղղակի Խմբագրութենէս կրնայ ընդունուիլ ԶՐԻ՝ ուղարկելով 5 սանտ· — 10 փրայ· — 2 կոպ· նամակադրոշմ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ "ՀԱՆԴԻՍԻ"

ԽՄԲԳԻՐ
Ա· ՌՇՏՈՒՆԻ

Imp. Universelle — F. Mizrahi - Alex.